ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 7-Ի ԹԻՎ 79-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 7-Ի ԹԻՎ 79-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի դեկտեմբերի 7-ի «Հայաստանի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատությունների՝ պետական բյուջեի միջոցներից ֆինանսավորման գործակիցները և նորմատիվները հաստատելու մասին» թիվ 79-Ն հրամանի 1-ին կետով հաստատված Հայաստանի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատությունների՝ պետական բյուջեի միջոցներից ֆինանսավորման գործակիցներում և նորմատիվներում (այսուհետ՝ գործակիցներ և նորմատիվներ) կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները.

- գործակիցների և նորմատիվների 2-րդ կետի 2-րդ ենթակետը բ պարբերությունից հետո լրացնել նոր պարբերությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Ընդ որում, հաստատությունը կարող է նաև սույն ենթակետով նախատեսված դասղեկության համար նախատեսվող լրավճարի սահմաններում սահմանել դասղեկի հաստիք։»,

- ուժը կորցրած ճանաչել գործակիցների և նորմատիվների 2-րդ կետի 3.1-րդ ենթակետի «դասարանների թվի որոշման համար հիմք է

հանդիսանում նախնական զինվորական պատրաստության և(կամ) անվտանգ կենսագործունեության առարկա դասավանդվող դասարանների միջին տարեկան թիվը, իսկ» բառերը,

- գործակիցների և նորմատիվների 2-րդ կետի 4-րդ ենթակետի ա պարբերության վերջին նախադասությունում «Առանձին ավագ» բառերը փոխարինել «Ավագ» բառով,

4) գործակիցների և նորմատիվների 2-րդ կետի 4-րդ ենթակետի «դ» պարբերության վերջին նախադասությունում «կադրերի գծով տեսուչի» բառերը փոխարինել «անձնակազմի կառավարման մասնագետի» բառերով,

5) գործակիցների և նորմատիվների 2-րդ կետի 4-րդ ենթակետի «ը» պարբերությամբ հաստատված աղյուսակի 3-րդ կետը «քանորդի չափով» բառերից հետո լրացնել «(բացառությամբ գիշերակացով աշակերտներ ունեցող հատուկ և մասնագիտացված դպրոցների)» բառերով,

6) գործակիցների և նորմատիվների 2-րդ կետի 4-րդ ենթակետի «ը» պարբերությամբ հաստատված աղյուսակի 3-րդ կետը «և-ս մեկ հաստիքային միավոր» բառերից առաջ լրացնել «-1 հաստիքային միավոր՝ շենք-շինությունների տարածքի յուրաքանչյուր մաքրվող մինչև 600 քառ.մ-ի մաքրման համար (գիշերակացով աշակերտներ ունեցող հատուկ և մասնագիտացված դպրոցների դեպքում) (բացառությամբ գիշերակացով աշակերտներ ունեցող հատուկ և մասնագիտացված դպրոցների)» բառերով,

7) գործակիցների և նորմատիվների 3-րդ կետը լրացնել նոր 10-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«10) սույն գործակիցներում և նորմատիվներում կիրառվող «հատուկ դպրոց» տերմինը կիրառելի է նաև ռեսուրս կենտրոնների դեպքում, իսկ «ավագ դպրոց» տերմինը՝ կրթահամալիրների և վարժարանների դեպքում։»։

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից։

ՆԱԽԱՐԱՐ՝ **Ժ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**